

Ռուզաննա ԱՌԱՔԵԼՅԱՆ*

Երևանի պետական համալսարան

ԳԻՏԱՓՈՐՁԸ ՈՐՊԵՍ ՀՈԳԵԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴ

Հոդվածում քննության է առնվում գիտափորձային մեթոդը, որը կիրառելիս հնարավորություն է ընձեռվում ուսումնասիրել լեզվական փաստերը՝ քննվողի կողմից վերահսկվող ու ղեկավարվող պայմաններում: Հոգելեզվաբանական ուսումնասիրության այս մեթոդը օգնում է մարդու կողմից տեղեկատվության ընկալման, յուրացման և վերարտադրման ընթացքն առավել արդյունավետ քննելու գործում: Ազատ զուգորդումների հոգելեզվաբանական մեթոդի կիրառմամբ հույզերի բառային կարգին պատկանող միավորները դիտարկվում են որպես լեզվական փաստեր և խոսքաստեղծման գործընթացի անբաժանելի մաս: Գիտափորձի մասնակիցների խոսքային ստեղծագործական ունակությունները մեծապես կախված են նրանց սոցիալ-տարիքային բնութագրից: Ընդհանուր առմամբ, վերլուծությունը տվել է բուհական համակարգում անգլերեն բառապաշարի որոշակի կարգի յուրացման պատկեր, որը կարելի է արտածել բառապաշարի այլ կարգերի վրա:

Բանալի բառեր. հոգելեզվաբանական մեթոդ, զուգորդային գիտափորձ, լեզվական կարգ, շարակարգային և հարացուցային զուգորդում, հուզանիշ բառեր

Ներածություն

«Գիտափորձ» եզրույթը լեզվաբանության մեջ ի հայտ է եկել 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ հնչյունաբանության գիտափորձային մեթոդներով ուսումնասիրվում էր, մասնավորապես, հնչյունների արտաբերումը: Գիտափորձի անցկացումն անմիջական մասնակիցների հետ վերաբերում է «դաշտային լեզվաբանությանը», որը վերաբերում է լեզվակիրներից ամբողջական տեղեկություն ստանալու մեթոդաբանության կիրառմանը՝ լեզվի ուսումնասիրության նպատակով: Լեզվաբանության

* arakelyanrouzanna@gmail.com ORCID: 0000-0002-6951-8153



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 07/02/2024

Revised: 11/04/2024

Accepted: 30/04/2024

© The Author(s) 2024

մեջ գիտափորձի կիրառման պատմությունը կարելի է ստորաբաժանել երեք հիմնական փուլերի. ա. հնչյունաբանության մեջ այդ մեթոդի ակտիվ յուրացում, բ. գիտափորձի՝ որպես լեզվի մասին գիտելիքի ձեռքբերման մեթոդի ճանաչում Լ. Շչերբայի աշխատանքի շնորհիվ և լեզվի ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական առանձնահատկությունների ու լեզվական նորմերի և շփումների հետ կապված խնդիրների ուսումնասիրության ծրագրերի մշակում, գ. նշված ծրագրերի իրականացում (Մաթեմ, 1974):

Ուսումնասիրությունների շարքում առավել մեծ ուշադրության է արժանի հոգելեզվաբանական գիտափորձը, որն առանձնանում է իր յուրօրինակ մեթոդաբանությամբ և արդյունքների վերլուծության ռազմավարությամբ:

Չոգելեզվաբանական գիտափորձի առանձնահատկությունները

Չոգելեզվաբանական գիտափորձի խնդիրը քննվողին համապատասխան փորձառական իրադրության մեջ դնելն է, որտեղ նա դեկավարվող ընտրություն է կատարում և որոշում կայացնում, չնայած այն փաստի, որ որոշումը կարող է լինել ինչպես գիտակցված, այնպես էլ չգիտակցված: Այլ կերպ, գիտափորձում կայուն են դառնում գործոնները, որոնք կարող են ազդեցություն ունենալ նման իրադրության մեջ ընտրություն կատարելու և որոշում կայացնելու հարցում: Փոփոխական է միայն այն գործոնը, որն ուսումնասիրության առարկան է և, հետևաբար, որին տրվում է տարբեր նշանակություն: Նշված գործոնը ֆիքսվում է և առավելագույնս է ազդում գիտափորձի ընդհանուր արդյունքների վրա:

Քանի որ լեզուն իր էությամբ հասարակական բնույթ ունի, տարբեր խոսքային անհատների լեզվական կողերը, մասնավորապես, միևնույն հասարակական խմբում պետք է ինչ-որ չափով համընկնեն: Հետևաբար, եթե գիտափորձի մասնակիցը կարողանում է ճիշտ տեղեկություն տալ իր գիտելիքի մասին, ապա մյուս լեզվակիրների պատասխանների համընկնումը նրա պատասխաններին մեծ մասամբ ենթադրելի է: Սա է պատճառը, որ գիտափորձի մասնակիցների մեծ քանակն այնքան էլ պարտադիր պայման չէ, բացառությամբ այն դեպքերի, երբ հետազոտողը նպատակ է հետապնդում ճշտել լեզվական կողերի տարբերությունները կոնկրետ տարածական խմբերի ներկայացուցիչների մոտ: Գիտափորձի արդյունքների ճշգրտությունն ապահովելու գործում կարևոր են մասնակիցների նախնական և կրկնակի հարցումները: Արդյունքների օբյեկտիվությունը կախված է նաև գիտափորձ անցկացնողի կողմից ճիշտ գործելակերպի ընտրությունից ու հարցադրումների ճիշտ ձևակերպումից: Ստացված արդյունքների արժեքն ստուգվում է այլ հետազոտողների կողմից նմանատիպ հարցադրումների առաջաշարժմամբ ու փորձառական

իրադրության մեջ ճշգրտամար, ինչպես նաև ուսուցողական գործընթացի ընթացքում դրանց կիրառման արդյունավետությամբ:

Միջնորդավորված ուսումնասիրության պարագայում եզրակացությունն արվում է միևնույն հոգեկան երևույթների տարբեր հատկությունների միջև առկա կապերի բացահայտման միջոցով: Այս դեպքում առավել հաճախ հանդիպող չափանիշը գործընթացների երկարատևությունն է, ուշադրության ապակենտրոնացումը, դադարները, հիշողության ծավալն ու որակը և այլն: Հոգելեզվաբանության մեջ ուղիղ գիտափորձային մեթոդների քանակը (երբ արձանագրվող փոփոխություններն անմիջականորեն արտացոլում են քննվող երևույթը), ինչպես արդեն նշվեց, սահմանափակ է: Այդպիսին է, մասնավորապես, բառային ազատ զուգորդումների գիտափորձը, որի դեպքում անմիջական տեղեկություն է ստացվում քննվողների ներքին բառապաշարի կառուցվածքի, այսինքն՝ այն ճանաչողական գործընթացների մասին, որոնք հիմք են դարձել զուգորդման համար: Զուգորդումը երևույթների կամ առարկաների միջև գոյություն ունեցող կապն է, որը հենվում է անհատական փորձի վրա: Անհատական փորձը կարող է համընկնել հասարակական փորձին, ինչպես նաև խոր արմատներ ունենալ առանձին մարդկանց նախկին փորձում: Զուգորդային գիտափորձի արդյունքում առաջ եկած զուգորդումները կարող են դասակարգվել երկու սկզբունքով. զուգորդի և դրդաբառի փոխհարաբերության և զուգորդային գործընթացի ստրատեգիայի հիման վրա:

Զուգորդման խորքային գործընթացների բացահայտումը հնարավոր է մեծ քանակությամբ զուգորդային գիտափորձերի արդյունքների համադրական վերլուծության, բառային կարգերի միջև առկա փոխհարաբերությունների հիմքում ձևավորված համընդհանուր օրինաչափությունների վերհանման, մանկական խոսքի և խոսքի խանգարման բնագավառում զուգորդային գործընթացների ուսումնասիրության, ինչպես նաև նոր փորձառական մեթոդների մշակման միջոցով:

Ներկայացված դրդաբառերի դիմաց տրվող պատասխանների ընտրության գործոններից են ոչ միայն լեզվաբանականը, այսինքն, դրդաբառի՝ քերականական այս կամ այն դասին պատկանելությունը, և տարիքայինը, այլև մասնակիցների կրթության մակարդակը, մասնագիտությունը, անհատական հատկանիշները և փորձը: Դրդաբառ-զուգորդ փոխհարաբերություններում ներհյուսված են բառերի իմաստային նմանությունները, դրանց զուգորդելիության, այսինքն՝ միասնաբար կիրառելիության աստիճանը թե՛ լեզվում, և թե՛ խոսքում: Որպես կանոն առանձնացվում են զուգորդային գործընթացի հետևյալ երեք փուլերը. դրդաբառի ճանաչում, դրա գործառության բացահայտում և զուգորդման (հակադրման) ծագում: Ա. Զալևսկայան առաջին փուլում տարբերակում է դրդաբառի ճանաչումը բառաձևի մակարդակում, այսինքն՝ առանց նշանակության հաշվառման, և նշանակության ճանաչումը բառաձևի ու բառա-

պաշարի խորքային որևէ միավորի կապի հաստատման միջոցով (Залеvская, 1990, էջ 73): Քանի որ լեզվական գիտակցությունը հարաբերակցվում է արտալեզվական ոլորտի հետ, ապա բնական է վերջինիս արտահայտումը և՛ խոսքում, և՛ լեզվական գիտակցության մեջ: Համապատասխանաբար, զուգորդումները կարող են լինել լեզվական և արտալեզվական: Արտալեզվական զուգորդումներն են փոխաբերությունները, դարձվածները, համեմատությունները և այլն: Դրանք իրենց արտահայտությունն են ստացել նաև ժողովրդական բանահյուսության, արվեստի և մշակույթի մեջ՝ ներկայացնելով ազգի և անհատի հոգեբանությունը:

Ժամանակակից հոգելեզվաբանությունն առաջարկում է բառազուգորդումների ուսումնասիրության մի քանի ձև: Դրանցից ամենատարածվածն ու արդյունավետը, ինչպես նշվեց, զուգորդումների հոգելեզվաբանական գիտափորձն է, որի ընթացքում տրվող զուգորդումները երբեք պատահական չեն լինում: Քանի որ բառի ճանաչման գործընթացը բավականին բարդ է, ապա ակնհայտ է զուգորդումների ոչ միշտ հստակ պատկանելությունն այս կամ այն սկզբունքով առանձնացված խմբերում: Մրանով էլ պայմանավորված են ժամանակակից հոգելեզվաբանության կողմից առաջարկվող բառազուգորդումների տարբեր դասակարգումները: Ձևական են համարվում Ա. Ջալևսկայայի, Մ. Մարշալովայի և այլ ուսումնասիրողների դասակարգումները: Ըստ Մ. Մարշալովայի դասակարգման՝ զուգորդումները լինում են շարակարգային և թեմատիկ, ըստ Ռ. Ռոմետվեյտի՝ առանձնանում են նաև մեջբերումային և սահմանագծային զուգորդումներ (Rommetveit, 1968): Թեմատիկ զուգորդումները կարող են իմաստային միևնույն դաշտի անդամներ լինել: Դրանք հաճախ տեղեկություն են հաղորդում բառերի նշանակության շարայթային և գործաբանական հատկանիշների մասին (այս մասին ավելի մանրամասն տե՛ս Մարշալովա, 1995, էջ 68): Սահմանագծային են կոչվում գործողություն, տեղ, ժամանակ, պայման, պատճառ կամ հետևանք ցույց տվող զուգորդումները: Ըստ հեղինակի՝ դրդաբառին ձայնարկությամբ պատասխանելու դեպքում զուգորդումները նույնպես սահմանագծային են համարվում: Մեջբերումային տիպի զուգորդումներ են գեղարվեստական երկերից, երգերից, ասացվածքներից վերցվող բառերն ու ասույթները: Մրանցում հաճախ իր արտահայտումն է գտնում հասարակական, ազգային, մշակութային և սոցիալական պատկանելությունը): Մեր կողմից ԵՊՀ անգլիական բաժնում (2007 թ.) անցկացված հոգելեզվաբանական ազատ զուգորդումների գիտափորձի արդյունքներն ամփոփելիս առաջնությունը տրվել է Ա. Լեոնտևի, Ա. Շախնարովիչի, Յ. Սորոկինի ածական-դրդաբառերի դասակարգմանը (տե՛ս Մյաչկոვა, 1990, էջ 65): Ըստ այս դասակարգման՝ հակազդումները կարող են լինել շարակարգային, հարացուցային, բառակազմական և բնաձայնական:

Որպես կանոն՝ շարակարգային զուգորդումներում հակազդումը և դրդաբառը բառակապակցություն են կազմում, մինչդեռ հարացուցային

զուգորդումներում դրանք մտնում են միևնույն դասի մեջ: Շարակարգային և հարացուցային զուգորդումների սահմանումները բազմաթիվ են: Ռ. Յակոբսոնը նշում է, որ և շարակարգային, և հարացուցային զուգորդումներում հնարավոր են նմանության և տարբերության հիմքով առանձնացրած զուգորդումներ (Jakobson, 1971):

Շատ բան է կախված նաև դրդաբառի ճիշտ ընկալումից: Այսպես, եթե այն ընկալվում է որպես տեքստի միավոր, ապա զուգորդը, քերականորեն կապվելով դրդաբառի հետ, դառնում է շարակարգային: Եթե բառն ընկալվում է որպես առանձին նախադասություն կամ հարցում, ապա պատասխանը կարծես արձագանք՝ է տալիս դրան: Հարկ է նշել նաև, որ շարակարգային զուգորդը նորմ է համարվում, մինչդեռ հարացուցայինները պայմանավորված են լինում գիտափորձի առաջադրանքով:

Անզլերենի հուզանիշ բառերի գիտափորձային քննություն

Մարդու հուզական ոլորտն աչքի է ընկնում հարստությամբ և բարդ կառուցվածքով: Հույզերը, գործունեության ղեկավարման հոգեբանական մեխանիզմները լինելով, ոչ միայն որոշվում են գործունեության բնույթով, այլև պայմանավորում են այն: Հույզերի առաջացման հիմքն աշխատանքային, մշակութային, ընտանեկան կյանքում մարդկանց միջև գոյացող փոխհարաբերություններն են: Հույզերը, ինչպես մտքերը, կարող են վերարտադրվել գիտակցության մեջ՝ կազմելով մտածական գործունեության անբաժան մասը: Հույզերը սերտորեն կապված են մեկը մյուսի հետ: Յուրաքանչյուր հուզատեսակ ունի իր հակադրությունը՝ հաճախ ընդգրկելով այն (երջանկության արցունքներ):

Ինտենսիվության և տևողության առումով ինչպես հույզերը, այնպես էլ զգացմունքները, կարող են ընթանալ աֆեկտի ձևով: Չնայած որակական առումով հույզերն ու աֆեկտները նույնն են, գործունեության կառուցվածքում դրանք զգալիորեն տարբերվում են իրենց զբաղեցրած տեղով և դերով: Աֆեկտներ են կոչվում հուզական այն գործընթացները, որոնք արագորեն տիրապետում են մարդուն և ընթանում են բուռն կերպով: Դրանք բնորոշվում են գիտակցության նշանակալից փոփոխությամբ, սեփական գործողությունների վրա մարդու կամային հսկողության խանգարումներով (ինքնաստիրապետման կորուստ), ինչպես նաև օրգանիզմի ողջ կենսագործունեության փոփոխմամբ: Ի տարբերություն հույզերի՝ աֆեկտները կարճատև են:

Հույզերի հոգեբանության մեջ կիրառվող տերմինները խիստ բազմազան են, հաճախ միևնույն տերմինը տարբեր կերպ է մեկնաբանվում: Երբեմն էլ հույզ ու զգացմունք հասկացությունները չեն տարբերակվում: Այսպես, զգացմունքները բարձրագույն հույզեր են համարվում, իսկ հույզերը՝ հակադրվում աֆեկտներին: Մինչդեռ, հույզը հաճախ սահմանվում է որպես երևույթների ու իրադրությունների կարևորության

վերապրում՝ հոգեկան արտացոլմամբ, իսկ զգացմունք է համարվում մարդու հուզական վերաբերմունքն իրականության առարկաներին ու երևույթներին: Ի տարբերություն հույզերի՝ զգացմունքներն ավելի կայուն և ընդհանրացված են՝ արտահայտելով անհատի զարգացման ընթացքում ձևավորվող արժեքներն ու պահանջմունքները: Հույզերը կամ աֆեկտները ճանաչողական գործընթացի մշտական հոգեկան ուղեկիցներն են, հետևաբար, ճանաչողական և հուզական գործընթացների դիտարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այդ միասնությունը: Հույզերի արտալեզվական դրսևորումներներից են. դիմախաղը, ժեստերը, դիրքի, կեցվածքի փոփոխությունները և այլն: Արտահայտման այս ձևերը, որոշ ընդհանուր գծեր ունենալով, էականորեն տարբերվում են միմյանցից:

Լեզվաբանության մեջ հույզերը շատ հայեցակերպերով են դիտարկվում: Դրանցից են հույզերի և լեզվաբանական կարգերի, եղանակավորության, գործաբանության, արտահայտչականության և իմաստաբանության հայեցակերպերը: Հույզերի հասկացական բազմազանությունը կրկին անգամ ընդգծում է դրանց կարևորությունը մարդու կենսագործունեության մեջ:

Քանի որ լեզուն հուզական գործառույթ ունի, այն և՛ օբյեկտիվ տեղեկության, և՛ հույզերի հաղորդման միջոց է: Հույզերի լեզվական դրսևորումներից են հնչերանգը, եղանակավորությունը, բառակազմական, քերականական և հարալեզվական միջոցները: Հույզերի հնչերանգային, քերականական արտահայտությունները և լեզվական եղանակավորությունը նույնպես քննության առարկա են, քանի որ դրանք նույնպես որակում են հույզի արտահայտման այս կամ աստիճանը:

Ինչպես նշվեց, հույզերը, աշխարհի արտացոլման ձև լինելով, արտահայտում են ոչ թե օբյեկտիվ իրականության առարկաները կամ իրողությունները, այլ մարդու վերաբերմունքը դրանց նկատմամբ: Փաստորեն հույզերն օբյեկտիվ իրականության երևույթների կամ առարկաների գնահատման ձևերն են: Հույզերի արտահայտումը լեզվում ոչ միայն դրանց անվանումների, այլև հենց հույզերի անմիջական հաղորդումն է:

Վերը նշվեց, որ հույզերը կարող են արտացոլման և՛ ձև, և՛ առարկա լինել: Երբ հույզն արտացոլման առարկա է, ապա դրա համապատասխան դրսևորումը լեզվում պարզապես որոշակի հույզի հասկացությունն ու բառայնացումն է: Նման դեպքում հետազոտողը պետք է հաշվի նստի հոգեբանության ու բնախոսության ոլորտում կատարված ուսումնասիրությունների արդյունքների հետ, որոնց համաձայն՝ գործունեական որոշակի ակտի մեջ դիտարկելի են հույզերի առարկայացման, գիտակցման տարբեր մակարդակները:

Հույզերի բառային կարգին պատկանող միավորներն առանձնանում են իրենց հասկացական կատարելության և լեզվական նշույթավորման բարձրագույն աստիճանով: Հույզի կարգայնացման ընթացքին հետևելով՝

հնարավոր է որոշակի տեղեկություններ ստանալ օտար լեզվի յուրացման փուլային հաջորդականության մասին:

Բառի հուզական բաղադրիչը դեռ հույզ չէ, առավել ևս, այն ոչ թե նշանակում է հույզ այլ միայն նշանակցում: Այսպիսով, հետազոտության առարկան են դարձել ոչ թե հուզական երանգները, այլ հենց հույզերի բառային կարգին պատկանող միավորները՝ իրենց դենտատիվ և դեսիգնատիվ իմաստներով:

Բառիմաստի յուրացումն առաջնային է մարդու ճանաչողական գործունեության մեջ: Օբյեկտիվ իրականության առարկաներն ու երևույթները մեր գիտակցության սեփականությունն են դառնում բառերի միջոցով: Բառերն իրենց հնչյունական կազմով և իմաստով հանդես են գալիս որպես այդ երևույթների ու առարկաների փոխարինողներ: Սակայն, ամենից առաջ, յուրաքանչյուր բառ այդպիսին դառնալու համար ենթադրում է որոշակի ընդհանրացում և վերացարկում: Այդ ընդհանրացման ու վերացարկման շնորհիվ մենք հասնում ենք այնպիսի մի աստիճանի, որում բառիմաստն այլևս չի համընկնում կոնկրետ առարկայի անվանման հետ:

Չույզերի բառային կարգին են պատկանում այն միավորները, որոնց դենտատիվ բաղադրիչը վերաբերում է որևէ հույզի կամ հուզատեսակի: Բառերի միջոցով, ինչպես նշվեց, արտացոլվում են առարկաների հատկանիշները՝ իրերի աշխարհը փոխարինելով գիտակցության մեջ բառերի կարգայնացած հարաբերություններով:

Չնայած լեզվի հուզական և մտածական պլանի սերտ կապին՝ հույզերի կարգայնացման խնդիրը մտնում է նվազագույնս ուսումնասիրվածների շարքը: Սա պայմանավորված է նաև հույզ երևույթի բարդությամբ: Դա է պատճառը նաև, որ հույզերի լեզվական կարգը հաճախ լիարժեք սահմանումներ չունի: Այսպես, Վ Շախովսկին, բնութագրելով հույզ նշանակող բառերը, այդպիսիք է համարում դրական կամ բացասական գնահատական պարունակող հասկացությունները՝ նշելով, որ հուզականությունն ու գնահատականը, թեև սերտորեն կապված են, բայց միանման չեն (Шаховский, 1987, էջ 28):

Յուրաքանչյուր բառ՝ որպես հասկացություն բովանդակող միավոր, ենթադրում է առարկաների ու երևույթների ընդհանուր, էական հատկանիշների վերացարկված արտացոլումը գիտակցության մեջ: Տվյալ դեպքում հույզերի բառային կարգն արտահայտում է հույզ երևույթը՝ իր հասկացական ընդհանրացմամբ:

Տարբեր են կարծիքներն այն մասին, թե ինչպես կարելի է դասակարգել հուզատեսակները: Ավելին, դրանք ոչ միայն չեն համընկնում, այլև հաճախ հակադրվում են միմյանց: Սա, ինչպես արդեն նշվեց, պետք է պատճառաբանել հույզ և զգացմունք երևույթների մի կողմից բազմազան և պակաս ուսումնասիրված լինելով, մյուս կողմից՝ հույզ երևույթի բարդ բնույթով: Տեսական գրականության ուսումնասիրությունը հիմք է տալիս

նշելու, որ հույզերի բառային կարգի մեջ ընդգրկվում են ն' հույզերի բնախոսական անվանումները, ն' զգացմունքների վերացարկված ընդհանրացումները:

Հույզերի լեզվաբանական բնույթը հասկանալ և ներկայացնել հնարավոր է գիտափորձի միջոցով՝ անհատական գիտակցությանը դիմելով ճանապարհով: Բառիմաստի ուսումնասիրության հոգելեզվաբանական մոտեցումը ենթադրում է, որ լեզուն նախ խոսող անհատի գիտակցության արտացոլումն է: Հոգելեզվաբանական մոտեցումը կիրառելիս կարևորվում է մեթոդի խնդիրը: Բնական է, որ ընդունված լեզվաբանական մեթոդները, հիմնվելով ուսումնասիրողի ներհայեցողության կամ բառարանագրական տվյալների վերլուծության վրա, բավարար չեն: Որպեսզի ապահովվի գիտափորձի արդյունքում ստացված նյութի վերլուծության առավելագույն օբյեկտիվությունը, պետք է խնամքով կազմակերպել ու իրականացնել գիտափորձը՝ մասնակիցների գիտակցությանը դիմելու ճանապարհով:

Գիտափորձում ներկայացվող զուգորդումներն առաջանում են որպես պահանջմունքի բավարարման մտածական միջոցներ կամ ճանաչողություն (Շ. Պիաժեի ձևակերպմամբ՝ ակկոմոդացիա), հուզական զուգորդումներն ի հայտ են գալիս որպես ընկալումների օբյեկտավորման և գնահատականի ձև կամ իմացություն (ըստ Շ. Պիաժեի՝ ասիմիլյացիա) (Սիաժե, 2008): Դրանց խոսքային արտահայտության տարրերը բառազուգորդումներն են:

Բառերի զուգորդային կապերին դիմելը հիմնավորված է հոգեբանական նկատառումներով, նաև նրանով, որ բառիմաստի փոփոխությունն արտահայտվում է բառի զուգորդային դաշտում: Ազատ զուգորդումների հոգելեզվաբանական մեթոդը հնարավորություն է ընձեռում հույզերի բառային կարգին պատկանող միավորները դիտարկել որպես լեզվական փաստեր և խոսքաստեղծման գործընթացի անբաժանելի մաս: Կարելի է հաստատապես ասել, որ հայտնի է միայն Վ. Շախովսկու աշխատանքը, որում հույզերի բառային կարգին պատկանող միավորները դիտարկվում են լեզվի ընդհանուր բառապաշարի կազմում և միայն լեզվաբանորեն: Նշված հետազոտության մեջ հույզերի բառային կարգը և դրա իմաստային կառուցվածքը նույնպես խոր վերլուծության չեն ենթարկվել:

Հույզերն իրականում ունեն դրական, բացասական և չեզոք բնույթ: Խոսվում է նաև, այսպես կոչված, բնեռային հույզերի մասին, որոնցից են ուրախություն, տխրություն, տառապանք, ձանձրույթ, բավարարվածություն, հաճույք և այլն: Չեզոք հույզերից է, օրինակ, հետաքրքրասիրությունը: Մարդու հուզավիճակն առանձին հույզերի ամբողջություն է, որի մեջ առկա է գերակշռող հուզատեսակը: Եթե հուզատիպի ինտենսիվությունը բավականաչափ բարձր է, ապա այն որոշակի ազդեցություն է ունենում խոսքային գործունեության վրա: Անհատի հոգեբանական տիպից, կրթության մակարդակից, դաստիարակությունից և մտտիվացիոն

գերակշռող գործոնից է կախված, թե հուզական որ գործընթացն է գերակշռում և խոսքային արտահայտություն ստանում: Հույզերի ամեն տեսակի դրսևորումները լեզվում նշանակում են դրանց տարբեր աստիճանի ամրակայումը գիտակցության մեջ: Այս առումով գիտակցությունը, որն իրականության արտացոլումն է մտածական ու զգայական ձևով, ոչ միայն գիտելիք է, այլև այդ գիտելիքի վերապրումը մարդու կողմից:

Քանի որ խոսքը մարդու ոչ միայն գործիքն է, այլև գնահատման միջոցը, ապա հույզերի բառային կարգին պատկանող միավորների թվին են դասվում նաև հուզական գնահատական արտահայտող բառերը, այսինքն՝ հույզերի մտավոր վերապրումները: Դրանց օրինակ կարող են ծառայել *interesting, dangerous, bad, lucky, attractive, ugly* և այլ բառերը, որոնցում ոչ միայն հույզ կամ հուզատեսակ, այլև որոշակի վերաբերմունք է արտահայտված: Ասվածը հաստատվում է Վ. Շախովսկու այն դրույթով, որի համաձայն՝ հույզերի բառային կարգին պատկանող միավորները կարելի է ստորաբաժանել զուտ հուզականի և հուզագնահատողականի (Шаховский, 1984, էջ 32): Գեղեցկություն, սգեղություն հասկացություններն իրականում սուբյեկտիվ են: Դրանցից գեղեցիկը, օրինակ, կարող է վերագրվել նաև ամենին էլ ոչ գեղեցիկ օբյեկտին, սակայն այդ դեպքում ակնհայտ կլինի դրա միջնորդավորումը խոսողի հուզական վերապրումով: Ա. Վեժբիցկան, առանձնացնելով հասկացական նախատիպերն ու բառային ընդհանրությունները, հույզերի կարգի մեջ է ընդգրկում նաև կատաղություն, խուճապ, անհանգստություն, խանդ, սարսափ, հուսահատություն, ընկճվածություն, երախտագիտություն, վրեժխնդրություն և այլ բառերը (Wierzbicka, 1999, էջ 25):

Ստորև ներկայացնում ենք հույզերի բառային կարգի մեջ մտնող հույզ նշանակող և հուզական վերաբերմունք արտահայտող անզլերեն բառերի յուրացման անհատական առանձնահատկությունների փորձառական քննությունը բուհական կրթության ընթացքում: Որպեսզի ապահովվի գիտափորձի արդյունքում ստացված նյութի վերլուծության առավելագույն օբյեկտիվությունը, պետք է խնամքով կազմակերպել ու իրականացնել գիտափորձը՝ մասնակիցների գիտակցությանը դիմելու ճանապարհով:

Քանի որ բառագուգորդումներն արտահայտում են մարդու հոգեկան և ֆիզիկական գործունեությունը, անհատի արժեքային համակարգը, հույզերի կարգայնացումը լեզվախոսքային գործունեության մեջ կարելի է մշակույթի արտահայտիչ համարել: Զուգորդումներում բացահայտվող հարաբերությունները, հաճախ դեպի արտաքին օբյեկտ ուղղված լինելով, արտահայտում են մարդու վերաբերմունքն իր գործունեության նկատմամբ և փոփոխվում են սուբյեկտի զարգացման գործոնի ազդեցությամբ:

Գիտափորձի մասնակիցները բնութագրվում են տարիքային, սեռային և կրթական հատկանիշներով: Այսպես, օտար լեզվի յուրացման առաջին փուլում ավելի վառ ընդգծվում է խոսքային գործունեության վրա

ազդող տարիքային գործոնը: Ավելի բարձր տարիքում գործառական պարզունակ զուգորդումները վերափոխվում են բովանդակային, հետո էլ՝ կարգային զուգորդումների: Ներկայացվող ավագ տարիքային խմբի զուգորդումներում հանդիպում ենք ամբողջական ասույթներ, որոնք կայուն բնույթ ունեն: Երկրորդ կուրսի ուսանողներին հատուկ է դրդաբառի բովանդակության պլանին անդրադառնալը: Առաջին կուրսի համեմատությամբ, երկրորդ կուրսի շարակարգային պատասխանների թիվը նվազում է: Զուգորդումները ձեռք են բերում հարացուցային բնույթ, այսինքն՝ սկսվում է կարգային կառույցների ձևավորումը: Սա վկայում է այն փաստը, որ յուրացնելով հասկացությունն ու բառի կիրառական կողմը՝ տարիքային այս խմբի ներկայացուցիչները կրթահամակարգի օգնությամբ պարզում են հասկացությունների ստորակարգային հարաբերությունները և փորձում ընդհանրացնել դրանք: Փաստորեն, բառի նշանակության զարգացումը և հասկացությունների ընդհանրացման կարողությունը հատուկ է բարձր կուրսերի ուսանողներին:

Միջին և ցածր կուրսի ուսանողների պատասխանները տարբերվում են պատճառահետևանքային, իրադրական կապերի վերհանմամբ: Այսինքն՝ տարիքային այս խմբին հատուկ է գործնական ու հաղորդակցական սեփական փորձի նախնական կուտակումը մինչ դրա կարգային ընդհանրացումն ու կարգավորումը: Հարկ է նշել, որ եթե ցածր կուրսերի պատասխաններում գերակշռում են շարակարգային զուգորդումները, ապա ավագ տարիքային խմբի պատասխաններն աչքի են ընկնում բազմազանությամբ: Քանակական առումով այստեղ գերակշռող են հարացուցային զուգորդումները: Սա խոսում է լեզվական գիտակցության կառուցվածքի ձևավորման փուլերի մասին:

Քիտափորձի արդյունքների նախնական վերլուծությունը հաստատում է այն դրույթը, որի համաձայն՝ մշակույթի հարաբերականորեն փոքր տեղեկատվական դաշտը փոխհատուցվում է գրեթե բոլոր մասնակիցների վերաբերմունքի անմիջականությամբ, նշանակության խոր իմաստավորումով: Մասնակիցների լեզվական գիտակցության մեջ հույզերի բառային կարգի դրսևորումը կախված է համապատասխան բառանյութից: Հետևաբար, նյութի աղբյուրը տվյալ դեպքում սկզբունքային նշանակություն ունի: Հաշվի առնելով ճանաչողության ու խոսքաստեղծման ընթացքում հույզերի դերի կարևորությունը՝ հույզերի բառային կարգին պատկանող միավորները քննության են առնվել երկու հայեցակերպերի (լեզվականի և հոգեբանականի) համադրումով:

Այս նպատակով նախ ուսումնասիրվել են հույզերի հոգեբանական և լեզվաբանական հեղինակին հայտնի բոլոր դասակարգումները, այնուհետև դրանց հիման վրա կազմվել է հույզերի բառային կարգին պատկանող միավորների ամբողջական ցանկ, հետո ցուցակում տեղ գտած անգլերեն բառերը քննության են առնվել ըստ հաճախականության «Word Frequency Book» բառարանի (Carrol, Richman, 1971) տվյալների, որի

արդյունքում առանձնացվել են հույզ նշանակող և հուզական վերաբերմունք արտահայտող 32 ածականներ, և վերջում հույզերի արտահայտումների հայտնի դասակարգումներից վերհանված միավորներում համապատասխան բառարանների օգնությամբ ճշտվել է հույզի իմաստը:

Այսպիսով, որպես զուգորդման գիտափորձի նյութ ընտրվել են *happy, interesting, good, bad, pretty, quiet, glad, angry, cross, surprised, sad, dangerous, sorry, pleasant, frightened, perfect, handsome, lucky, scared, nervous, unhappy, calm, satisfied, attractive, ugly, merry, cheerful, astonished, uneasy, boring, moved, touching* բառերը: Պետք է նշել, որ անգլերենում, ինչպես այլ լեզուներում, կան հատուկ միջոցներ, որոնք հաղորդում են նկարագրվող հուզավիճակը: Դրանց թվում են. հույզ նշանակող մակբայները (*desperately, furiously, lovingly, icily, viciously, contemptuously*), խոսողի հույզերը նկարագրող բայերը (*to frighten, to excite, to agitate*), նախդիրով կիրառվող (*with love, with contempt, with malice, with hate*) և հույզերի բնախոսական վիճակ արտահայտող գոյականները (*tears, laughter, smile, paleness, redness*), հույզ նշանակող կամ նկարագրող և հուզական գնահատական արտահայտող ածականները (*angry, scornful, bad, good, pale, red, desperate, glad, happy*): Տվյալ պարագայում մեկ խոսքի մասին առաջնություն տալը պայմանավորված է նաև հետազոտության բազմակողմանիությունն ու արդյունավետությունն ապահովելու միտումով: Ածականի ընտրությունը կապված է փորձառական բազմաթիվ ու բազմազան նյութ ստանալու ակնկալիքով, քանի որ այն որպես խոսքի մաս առանձնանում է մեծ զուգորդելիությամբ (կոմբինատորիկայով): Այսպես, օրինակ, *touch-4.4851, touching-90.8603, excitedly-74.677, excited-259.38195, exciting-270.7914, admirable-9.5753, admiration-14.685, admiring-27.6336, sad-309.8477, sadly-109.6704, unpleasant-57.7199, unpleasantly-4.4570, unpleasantless-3.310, unhappy-144.8988, unhappiness-8.5014, perfect-249.9431, perfectly-156.8821*:

Հաճախականության բառարանի տվյալներից ակնհայտ է նաև, որ ածականն այլ խոսքի մասերից տարբերվում է ավելի բարձր հաճախականությամբ: Առաջադրված տեսական և գործնական խնդիրների իրագործման նպատակով իրականացվել է ազատ զուգորդումների գիտափորձ, որին մասնակցել են 16-20 տարեկան 72 ուսանող: Ազատ զուգորդման գիտափորձն անցկացվել է հետևյալ եղանակով. Հետազոտողը 15 վայրկյանի ընթացքում 5 վայրկյան ընդմիջումով մասնակցին երեք անգամ ընթերցել է դրդաբառերը: Գիտափորձի մասնակիցները հրահանգ են ստացել գրի առնել առաջին իսկ ինքնաբերական բառը: Ժամանակային նման բաշխումը պայմանավորված է հենց դրդաբառին հակազդում տալու կարևորությամբ:

Վերլուծությունը տարվել է դրդաբառ-հակազդում հարաբերության և զուգորդման ստրատեգիայի ուսումնասիրման ու դասակարգման

ճանապարհով: Արդյունքում ստացվել է 2138 բառագուգորդում: Դրդաբառի և գուգորդի հարաբերության վերլուծությունը բացահայտում է լեզվական, հաս-կացական և գործաբանական կապերը: Մրանք հաճախ հանդես են գալիս միաժամանակ՝ դժվարացնելով դրանց վերլուծությունը: Հնչյունական, հանգային, ձևաբանական, բառակազմական կապերն արտացոլվում են ձևակառուցվածքային գուգորդումներում: Զուգորդումների բովանդակային (իմաստային) կողմն ապահովվում է հարացուցային և շարակարգային կապերով՝ ընդգրկելով հասկացական գուգորդումների տիպը: Այդպիսին են հասկացական այն փոխհարաբերությունները, որոնք արտացոլում են հասկացության ընդհանրացման աստիճանը (*satisfied-delighted, unhappy-unfortunate, sad-lonely, cheerful-happy*): Վերջինս կապված է մարդու գործունեության կարգային և հուզական արտացոլման հետ, քանի որ իմաստային հարաբերությունները պայմանավորված են լեզվական համակարգի, ազգամշակութային ու կրթական գործոններով:

Որպես նմուշ ներկայացվող անգլերենի հուզանիշ բառերի գիտափորձային քննության արդյունքները վերլուծելիս ակնհայտ էր ցածր կուրսերի ուսանողների պարզունակ շարակարգային գուգորդումների գերակշռումը, որն էլ պայմանավորված է առօրյա գործածության լեզվի յուրացման բարձր աստիճանով: Մրա վառ օրինակներից են *pretty-child, interesting-story, lucky-person, boring-child, cheerful-family, ugly-woman* և այլ գուգորդումները: Տարիքային այս խմբի կողմից ներկայացվող հարացուցային գուգորդումները հիմնված են կա մ տարբերության, կա մ նմանության սկզբունքի վրա, ինչպես օրինակ, *astonished-surprised, happy-gay, angry-cross, merry-sad, good-bad, quiet-calm, glad-happy* և այլն: Ուսուցման ավելի բարձր մակարդակում ներկայացվող շարակարգային գուգորդումներում հակադրումները ոչ միշտ են միանշանակ հարաբերակցվում դրդաբառի հետ: Այստեղ հաճախ դժվար է դասակարգել իմաստային հարաբերություն ունեցող հակադրումները: Այսօրինակ դեպքերից են *happy-rareness, sorry-kind, nervous-poor, boring-crying, surprised-present, shocking-doing, frightened-forest, angry-hatred* և այլն: Զուգորդի և դրդաբառի միջև առաջացած հարաբերության ավելի մանրամասն դասակարգման հարցը քննելիս հարկ է նշել, որ հնարավոր են առաջին հայացքից նույնը թվացող գուգորդումների առաջացման տարբեր հիմքեր, տարբեր են լինում դրանք անգամ միևնույն լեզվակիր անհատների մոտ:

Շարակարգային և հարացուցային հակադրումներից բացի գոյություն ունեցող ընդհանուր ձևաբանական հիմք և հնչողություն ունեցող հակադրումները ոչ այնքան հաճախական են և առանձին դժվարություն չեն ներկայացնում: Անհատի խոսքային գործունեության, նրա գիտակցության, հոգևոր ու հուզական աշխարհների միջև եղած սերտ փոխ-

հարաբերություններն առավելագույնս դրսևորվում են հույզերի բառային կարգի միջոցով:

Հետաքրքրական է, որ առաջին կուրսում եզակի զուգորդումների մեծ թիվ են կազմում *interesting, bad, pleasant, astonished, calm, merry*, երկրորդում՝ *quiet, angry, dangerous, pleasant, frightened, interesting, bad, ugly, cheerful, lucky*, իսկ երրորդում՝ *bad, dangerous, frightened, handsome, scared, unhappy, ugly, cheerful, boring, touching* դրոշմաբանությունները: Եզակի զուգորդումների ուսումնասիրությունը բացահայտում է ուսանողների մտածողության որակական հատկանիշները, իսկ տարբեր զուգորդումների թիվը վկայում է դրանց կարծրատիպության մասին:

Շարակարգային զուգորդումները, բացահայտելով բառի արտաքին իմաստային հարաբերությունները, հաստատում են նշանակության յուրացման տարիքային փուլերի մասին Ժ. Պիաժեի տեսությունը: (Պիաժե, 2008) Նկատելի է, որ երրորդ կուրսի զուգորդումների թիվը, ի տարբերություն երկրորդի, գրեթե չի աճում: Սա ուշադրության արժանի ցուցանիշ է, որը վկայում է կրթական համակարգի ազդեցությունը բառերի յուրացման վրա: Օտար լեզվի յուրացման սկզբնական շրջանում լեզվամշակութային առանձնահատկություններից լեզվակիրները յուրացնում են լեզվի կառուցվածքային գործառնությունները, լեզվի արտահայտության պլանի հատկությունները: Հետո՝ նրանք առաջնորդվում են իրադրական իմաստներով, որոնք կոչված են ավելի բարդ հաղորդակցման խնդիրներ իրականացնելու:

Երրորդ կուրսի ուսանողների լեզվական գիտակցությունը կարգանացման ավելի բարձր փուլում է: Այս մասին են վկայում ներկայացված բովանդակային զուգորդումները, որոնք հաճախ գործառնական վերաբերություն ունեն կամ դեսիգնատիվ հարացուցային հակազդումներ են: Առաջին կուրսի համեմատությամբ՝ հարացուցային զուգորդումները զգալիորեն աճում են երկրորդ կուրսի պատասխաններում: Երրորդ կուրսում հարացուցային զուգորդումները նորից ավելանում են, սակայն ընդամենը 7-ով: Չնայած գիտափորձի տվյալների համաձայն ամենամեծ թիվը կազմում են շարակարգային զուգորդումները, տարիքի հետ դրանք նվազում են: Այսպես, եթե առաջին կուրսում տրվել է 496 շարակարգային պատասխան, ապա երկրորդում՝ այդ թիվը հասնում է 446-ի, իսկ երրորդում՝ 445-ի: Սա ևս վկայում է գիտակցության կողմից կարգի յուրացման երկրորդ՝ անհատական փորձառության ընդհանրացման կամ կոնցեպտուալ վերաբերության յուրացման փուլը, երբ յուրացվող բառերն իրենց տեղն են գտնում համանման հասկացությունների դասում: Ուշագրավ է նաև հարացուցային և շարակարգային զուգորդումների ընդհանուր ցուցանիշների համեմատությունը, որը վկայում է գործառնական դիապագոնի ընդլայնման մասին, երբ լեզու յուրացնողները գտնում և փորձարկում են հասկացության կամ բառի գործածման հնարավոր տարբերակները: Ընդհանուր առմամբ, կարելի է ասել, որ բառա-

զուգորդումների բազմազանությունը գործում է առնչանակային գործառական վերաբերություն ունեցող հակազդումների շնորհիվ: Իմաստային առումով զուգորդումների «քառասային» բնույթն արտահայտում է տվյալ տարիքային խմբերին հատուկ խոսքային գործունեության ընթացքը, իսկ բազմազանության գործոնը վկայում է լեզվակիրների գիտակցության մեջ տվյալ բառի յուրացվածության մասին:

Բառակազմական և հնչյունական զուգորդումները ձևակառուցվածքային զուգորդումների շարքից են: Գիտափորձի արդյունքները վկայում են, որ որոշ հնչյունական զուգորդումներն ունեն նաև իմաստային ընդհանրություն: Սրա ապացույց կարելի է համարել *perfect-effect, pleasant-present, amusing-music, hungry-angry, sad-a cigarette, merry-Mary* օրինակները: Բառակազմական երկրորդային զուգորդում է արձանագրվել մեկ մասնակցի պատասխանում, որը, համաձայն գիտափորձի անցկացման պայմանների, քննության առարկա չէ (*touching-swiftly, tightly*): Իմաստային խմբի միավորների հարաբերությունները շատ բազմազան են: Այսպես, առկա են նաև այսպես կոչված փոխարինման դեպքերը (*moved-removed*): Միևնույն հիմք ունեցող բառերին կիրառությունը, ըստ Լ. Տիտովայի, միանգամայն բնական է, քանի որ դրանք ամենամոտն են բովանդակային առումով՝ չնայած այլ քերականական ձևերով արտահայտվելուն (Титова, 1973, էջ 102): Սակայն նման օրինակների խիստ սահմանափակ քանակը զուգորդման գիտափորձի արդյունքներում պայմանավորված է դրդաբառի խոսքիմասային պատկանելությամբ: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ածականի բառակազմական զուգորդումներն այնքան էլ մեծ դեր չեն խաղում զուգորդային հիշողության մեջ: Հետևաբար, կարելի է ասել, որ դրդաբառի և զուգորդի միջև հարաբերությունների լեզվաբանական դասակարգումը մեծ մասամբ իմաստային հիմք ունի:

Գործառական բառազուգորդումները կապվում են գիտափորձի մասնակցի անմիջական կենսափորձի և գործունեության հետ: Ինչպես իրավամբ նկատում է Ռ. Ռոմետվեյտը, գործառական զուգորդումները գիտափորձի արդյունքներում ամենահետաքրքրականն են: Սա նաև կապված է այն փաստի հետ, որ շարակարգային զուգորդումներ հեշտորեն կարելի է ստանալ տեքստի վերլուծության ընթացքում: Հարացուցային զուգորդումներն ի հայտ են գալիս լեզվական համակարգի վերլուծության ընթացքում (Rommetveit, 1968): Մինչդեռ գործառական են այն զուգորդումները, որոնք արտահայտում են բառերի միջև առկա և հիշողության մեջ ամրագրվող հարաբերությունները: Գործառական զուգորդումներ կարող են լինել և՛ գոյականներ, և՛ բայեր, և՛ ածականներ: Դրանք վերաբերության գնահատողական մյուս տիպի բառազուգորդումներից տարբերվում են այս կամ այն գործունեությունն արտացոլող բովանդակությամբ: Այսպես, օրինակ, *touching-scene, scared-rabbit, satisfied-happy, nervous-surprised, astonished, horrified, angry, worried, sad-*

tears, scared-fear, frightened-film, sorry-fault, sorry-to interrupt տիպի զուգորդումները պետք է դասել գործառականների շարքը, քանի որ դրանք արտահայտում են գործունեության տեսակ, վիճակ ու հետևանք:

Գործառական վերաբերությունն են ձևավորում նաև անհատական ընկալումը, հուզական վերապրումն ու սեփական գնահատականն արտահայտող զուգորդումները. *calm-kind, interesting-various, lucky-married, no luck, scared-to fall in love, surprising-proposal, bad, sad-tired of life, disturbing-crying, dangerous-doctor, speed, perfect-performance, bargain, shocking-weep, games, pleasant-talk, interesting-film*, event և այլն: Գործառական զուգորդումներում երևում են մասնակիցների տարիքային, սոցիալական հատկանիշները: Դրանցում կան անհատական սուբյեկտիվ գնահատականներ, միայն տվյալ լեզվին ու մշակույթին հատուկ կապակցություններ, դրդաբառը բնութագրող կադապարային նշանակություններ:

Հարացուցային և շարակարգային զուգորդումները վերաբերում են կա՛մ զուգորդման իրադրությանը, կա՛մ իրեն՝ գիտափորձի մասնակցին: Վերջիններս տրամաբանական կամ կարգային կապի մեջ են դրդաբառի կամ պատկերավոր, նկարագրական իրադրության հետ: Հարացուցային կարգային զուգորդումները հասկացական հավասարագործության վրա հիմնված և իմաստային միևնույն համակարգին պատկանող զուգորդումներն են: Սրանք արտացոլում են կարգաստեղծման ներքին կառուցավորումը: Ստորադրական ու գերադրական կամ մասնավորեցնող ու ընդհանրացնող կարգային զուգորդումները տեղեկություն են հաղորդում փորձարկվողների այնպիսի մտածական ունակությունների մասին, ինչպիսիք են վերլուծումը և ընդհանրացումը: Առաջին կուրսի հարացուցային և շարակարգային զուգորդումների մեջ առանձնանում են *interesting-crazy, thriller, bad-untruthful, quiet-pessimistic, glad-interested, angry-dangerous, pleasant-ideal, pretty-love, angry-father, sad-dream, dangerous-kill, frightened-alien* զուգորդումները: *Happy, interesting, good, sorry, perfect, lucky, nervous, unhappy, satisfied, attractive, astonished, uneasy, boring* դրդաբառերին հարացուցային զուգորդումների թիվը երկրորդ կուրսում, ի տարբերություն առաջինի, աճում է: Մինչդեռ *pretty, quiet, glad, surprised, sad, dangerous, frightened, lucky, scared, calm, ugly, merry, cheerful, angry, pleasant* բառերի հարացուցայնությունը նկատելիորեն միայն աճում է բոլոր կուրսերի պատասխաններում: Ուշագրավ է, որ *angry* և *pleasant* բառերին տրված հարացուցային զուգորդումների թիվը նման է առաջին, երկրորդ և երրորդ կուրսերում: Շարակարգային զուգորդումների գրեթե նույն ցուցանիշ են տվել *happy, angry, sad* բառերը: Զուգորդման գիտափորձի արդյունքների վերլուծությունը վկայում է շարակարգային զուգորդումների հետևյալ տեսակների վերհանումը. գնահատականի վերագրում և շարահյուսական կապերի հիմքով ստեղծված զուգորդումներ:

Եզրակացություն

Լեզվի յուրացման հարցերի պարզաբանման և լեզվի ուսուցման մեթոդների ընտրության հարցում առաջին պլան է մղվում հոգելեզվաբանական ուսումնասիրության մեթոդի կիրառումը, որն առավել օբյեկտիվ է ներկայացնում լեզվի յուրացման մեխանիզմները: Գիտափորձի արդյունքների վերլուծությունը և հաշվառումը ապահովում է ստեղծագործական մտածողության արժևորումը սովորելու ընթացքում և գործարանական մոտեցման կարևորությունը: Գիտափորձին մասնակցած բարձր կուրսերի ուսանողների պատասխաններում արձանագրված հարացուցային զուգորդումները վկայում են լեզվագիտակցության կարգայնացման մասին և մատնանշում լեզվի յուրացման ավելի բարձր աստիճան:

Գրականություն

- Carrol, G., Davis, B. Richman, B. (1971). *Words Frequency Book*. New York, Hachette.
- Deese, J. (1965). *The Structure of Associations in Language and Thought*. USA, The Johns Hopkins Press.
- Jakobson, R. (1971). *Selected Writings*. V.2. Paris, The Hague.
- Osgood, Ch. (1957). *The Measurement of Meaning*. Illinois, University of Illinois Press.
- Rogier, J. (1996). *The Human Semantic Potential*. Massachussets, The MIT Press.
- Rommetveit, R. (1968). *Words, Meanings and Messages*. London, CUP.
- Wierzbicka, A. (1999). *Emotions across Languages and Cultures, Conceptual Primitives and Lexical Universals*. London, CUP publ., Routledge.
- Wilson, R. and Keil, F. (1999). *The MIT Encyclopedia of the Cognitive Sciences*. London, The MIT Press, Cambridge.
- Щерба Л. В. (1974). О тройком аспекте языковых явлений и об эксперименте в языкознании. *Языковая система и речевая деятельность*. Ленинград, изд. “Наука”.
- Залевская, А. (1990). *Слово в лексиконе человека: психолингвистическое исследование*. Воронеж, изд. “Лабиринт”.
- Залевская, А. (1996). *Вопросы теории овладения вторым иностранным языком в психолингвистическом аспекте*. Воронеж, изд. “Лабиринт”.
- Маршалова, М. (1995). *Психолингвистический анализ семантики*. Москва изд. “Ритм”.
- Мягкова, М. (1990). *Эмоциональная нагрузка слова: опыт психолингвистического исследования*. Воронеж, изд. Воронежского университета.
- Овчинникова, М. (1994). *Ассоциации и высказывания: структура и семантика*. Пермь, изд. ПГУ.
- Пиаже, Ж. (2008). *Речь и мышление ребенка*. Москва, изд. “Римис”.

Титова, Л. (1973). Функциональный аспект номинативного варьирования в тексте. Москва, изд. “Академия”.

Шаховский, В. (1984). Категоризация эмоций. Москва, изд. “Гнозис”.

Р. Аракелян – Эксперимент как психолингвистический метод исследования. – Данная статья посвящена изучению экспериментального метода, с помощью которого возможно рассматривать языковые факты с точки зрения и под контролем информантов. Метод свободных ассоциаций предоставляет возможность для изучения элементов лингвистической категории эмоций как языковых фактов и неотъемлемых частей речеобразования. Речевая деятельность информантов зависит от их социально-возрастных и культурных особенностей. Исследование показало степень изучения слов конкретной лингвистической категории, которая может обусловить также и другие категории и выбор методов преподавания новой лексики.

Ключевые слова: психолингвистический метод, ассоциативный эксперимент, лингвистическая категория, синтагматические и парадигматические ассоциации, эмотивные слова

R. Arakelyan – Experiment as a Psycholinguistic Method of Study. – The paper touches upon the importance of using the psycholinguistic experiment as a means of studying linguistic facts. The experimental method of psycholinguistic investigation assists the guided study of linguistic evidence presented by the participants. It tests how the brain and the human cognition systems carry out perception, production and representation of language. The experiment of free associations is a key to success in understanding the essence of English words denoting emotions as linguistic facts. It should be mentioned that the obtained results can be expanded on other categories of language.

Key words: psycholinguistic method, associative experiment, linguistic category, syntagmatic and paradigmatic associations, emotive words